Նոր ծրագրերի իրականացում

ԼՂՀ արտաքին գործերի նախարար Նաիրա Մելքումյանը օգոստոսի 19-ին ընդունեց «Երկիր եւ մշակույթ» հասարակական-մարդասիրական կազմակերպության ներկայացուցիչներին՝ այդ կազմակերպության ամերիկյան բաժանմունքի վարչության անդամ Արմեն Կարապետյանի գլխավորությամբ:

Հյուրերը պատմեցին կազմակերպության նոր ծրագրի մասին: Նշվեց, որ կազմակերպության հովանավորությամբ 1997 թվականից կամավորների բրիգադները ԱՄՆ, Ֆրանսիայի, Կանադայի, Եգիպտոսի հայ համայնքներից, ինչպես նաեւ Հայաստանից, աջակցում են Լեռնային Ղարաբաղին ետպատերազմյան վերաշինության գործում: Այս անգամ Շուշիի շրջանի Քարինտակ գյուղում կազմակերպությունը կվերականգնի մանկապարտեզի վթարային վիճակում գտնվող շենքը: Հրույցի մասնակիցները քննարկեցին նաեւ Շուշի քաղաքի համալիր վերականգնման հարցը:

Ն.Մելքումյանը երախտագիտություն հայտնեց «Երկիր եւ մշակույթի» ներկայացուցիչներին Լեռնային Ղարաբաղում մարդասիրական գործունեության համար՝ նշելով կազմակերպության դերը հայության բոլոր հատվածների միջեւ կապերի ամրապնդման գործում:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ